



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքասնեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

ԹԻԻ 3

2. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1950

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՒՒՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Անիկա անոր առջեւէն ձիւնի պէս բորոտեալ ելաւ։ Դ. Թադ. Ե. 27.

Առաջին ակնարկով երբ կը կարդանք այս համա-
րը, սարսափ մը կը պատէ զմեզ. ինչո՞ւ, ի՞նչպէս, չա-
փազանց պատիժ մը չէ՞ այս, յանկարծական չէ՞։

Երբ կարդանք Դ. Թադ. Ե. գլուխը, կը տեսնենք
հոն որ Նէեման Ասորի գօրապետը հրաշալի կերպով
մը բժշկուած, նոր հոգեւոր լոյս մը ընդունած՝ ուրա-
խութեամբ իր տունը կը վերադառնայ։

Գէեզի, Եղիոէ մարգարէին ծառան, ոչ միայն առա-
նաժայիտ այս հրաշքին, այլ շատ մը ուրիշ հրաշքնե-
րու ականատես եղած էր, բայց իր միտքը փոխած
չէր։ Իր դիրքը առ երկնային բաները որոշ ուղղութիւն
մը առած չէին։ Մարգարէին հետ իր ունեցած մտերիմ
յարաբերութիւնը իրեն համար մարգարէից դպրոց մը
ըլլալու էր, որուն մէջ դաստիարակուելով օր մը կրնար
նոյնիսկ մարգարէական փառաւոր պաշտօնին փոխա-
նորդել, ինչպէս Եղիոէ Եղիային։ Բայց կէտ մը կար
իր նկարագրին մէջ, — ազահուլթիւնը, որուն գօրաւոր
կերպով կառչած էր եւ որուն պատճառաւ չէր մեծնար
հոգեւորապէս, հակառակ այդ զեղեցիկ միջավայրին։

Նէեմանի գանձերը Գէեզիի ախորժակը գօրաւոր
կերպով զրգոցեցին։ Զանոնք ձեռք բերելու համար
սուտ մը յօրինել պէտք էր, որ սակայն իրեն ետեւէն
ուրիշ սուտերու եւ խաբէութիւններու ալ ծայր տուաւ,
որ վերջապէս իրեն անկման պատճառ եղաւ։ Գէեզի
մարգարէին առջեւէն ձիւնի պէս բորոտեալ դուրս ելաւ։

Մարգարէն Գէեզիի յանցանքին պատիժը ծանու-
ցանիլէ առաջ զարմանալի արտայայտութիւն մը ունի-
ր ցոյց կուտայ անոր զրդիչ պարագան։ «Ու
հիմա արծաթ առնելու, եւ հանդերձներ ու ձիթենի-
ներ եւ ալգիններ ու ոչխարներ եւ արջառներ ու ծա-
ռաներ եւ աղախիւններ առնելու ատե՞նք է»։ Մարգա-
րէն ըսել կ'ուզէ, մեզի ընտրեալներուս պէ՞տք է որ
աշխարհի ընթացքին հետեւինք, հարկ չէ՞ որ մենք
տարբեր ըլլանք ուրիշներէ։ Անիկա ըսել չուզեր թէ
Գէեզի երբեք հանդերձ կամ զրամ ունենալու չէր, կամ
մենք ձիթենիներ ու ալգիններ, եւ տուններ ու ստաց-
ուածք եւ ծառաներ ունենալու չենք, հապա մեր միտ-
քը լեցնող խորհուրդները, մեր նշանաբանը ատունք
ըլլալու չեն։ Առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորու-
թիւնը ու Ասոր արդարութիւնը, ու այդ բոլոր բանե-
րը (ոչ թէ պիտի առնէք կամ աւարէք) ձեզի պիտի
տրուի։

Կան ժամանակներ, շատ փափուկ ժամանակներ,
որոնց մէջ նոյնիսկ արծաթ ու հանդերձներ առնել
Աւետարանին ազգեցութիւնը կը կոտրէ։ Գէեզիի ժա-
մանակը ասանկ էր։

Կ'արժէ որ մենք հոգեւորներս այս մասին խոր-
հրդածենք։ Կ'արժէ, վասնզի մեր ժամանակներն ալ
շատ փափուկ են։ Աշխարհ այլեւս սկզբունքներու եւ
վարդապետութեանց ականջ դնել չուզեր, բայց կեան-

քի կը նայի ժամանակները փափուկ են, որովհետեւ շատ մը հոգիներ պատրաստ են եւ կը սպասեն հոգեւորներու գործնական կեանքի նշաններուն՝ Բրիտանիա գիրքը նետուելէ առաջ, ու շատ անգամ կը յապաղին, վասնզի հաւատացեալներու կեանքը իրենց համար օրինակելի է։ Ուստի հարկ է արթննալ ըլլալ։

Խոստովանինք թէ հաւատացեալներս մեր առաջին ապաշխարութեան օրերուն պէս անկեղծ հաւատքով, խոնարհ ու հեզ մնացած չենք, ընդհակառակն մեղքերու թողութեան պիտակցութիւնը ոմանց մէջ փոխան խոնարհութեան կարծես հպարտ պիտակցութիւն մը յառաջ բերած է թէ՛ մենք ուրիշներէն տարբեր ենք, եւ այս խրտչեցնող յատկութիւնը որ ամէն հաւատացեալի ալ մօտ է ու զանիկա կրնայ տապալել, գաղտագողի կը մտնէ անզգոյշ հաւատացեալի մը էութեան մէջ, զանիկա անգործածելի ընկու աւտիճան փոխելով։ Հաւատացեալ մը, բայց անպատու, հաւատացեալ մտքով, բայց ո՛չ սրտով, հաւատացեալ խօսքով, բայց ո՛չ կեանքով։ Աստուածային օրհնութիւնները, Սուրբ Հոգիին զօրութիւնը, իր վիպութեան ազդեցութիւնը դադրած են։ Աշխարհ մուտ գտած է հաւատացեալին սրտին մէջ։ Գէեզիի ու Մարիամի նման ինքն ալ իրեն մաքրութիւնը կորսնցուցած է։

Ի՞նչպէս կ'ըլլայ այս — Երբ որ հաւատացեալները անձնաքննութեան համար պակաս ժամանակ տան։ Այն որ անձնաքննութեան ժամանակ չիտար, չկրնար նաեւ մաքրուիլ, իրաւ կոշտ մեղքերէն ազատուած կ'ըլլայ, բայց ներքին զիւրաւ պաշարող մեղքերէն երբեք չկրնար ազատիլ, որովհետեւ զանոնք չփրկուող, անոնցմէ չմաքրել ինքզինքը եւ անոնց համար դեռ մեռած է։ Այսպէս կը տեսնենք շատ անգամ հաւատացեալներ, որոնք տարիներու աստուածապաշտութեան փորձառութիւնն ունին, բայց չունին անոր զօրութիւնը։ Եկեղեցին այսպիսի անդամներով չը կրնար գործունէութիւն ցոյց տալ, իսկ եթէ տալ ալ, անպտուղ գործունէութիւն մը կ'ըլլայ։

Բայց դեռ ուրիշ կէտ մըն ալ կայ, լուրջ անձնաքննութեան ժամանակ չտուող մէկը ո՛չ միայն ինքզինքը մաքրելու պատենութիւն չունենար, հապա ընդհակառակն տարբեր ուղղութեամբ կը զործածէ իր աչքերը, իր միտքը, իր խորհուրդները, իր բերանը։

Կը տեսնէ եղբօր մէկ չնչին տկարութիւնը եւ այդ տկարութեան վրայ կը ծանրանայ, մինչդեռ երբեք չի խորհիր թէ արդեօք Տէրը ի՞նչ դիւրք բռնեց անոր հանդէպ, ու հետզհետէ իր քննադատ աչքերով աւելին տեսնելով, քննադատ սրտով պէտք եղածէն աւելին մտածելով, քննադատ բերնով միշտ աւելի չափազանց խօսելով՝ յաճախ բանավէճերու իսկ տեղի կուտայ։ Այո, Աստուծոյ զաւակներն ալ կրնան բանավէճիլ, եւ յաճախ կը վիճաբանին ոչ թէ քաղաքական խնդրոց վրայ, այլ դժբաղդաբար հոգեւոր նիւթերու

վրայ, որոնք շարունակական ընթացք առնելով՝ երբեմն համայնքներ քարուքանդ ըրած են։

Մարիամ եւ Ահարոն ալ վիճեցան Մովսէսի հետ եւ անանկ նիւթի մը վրայով յանդիմանեցին զանիկա, որու մասին Տէրն իսկ Մովսէսը յանդիմանած չէր։ Ու ի՞նչ ահարկու պատիժ մը ընդունեց Մարիամ այս բանին համար, ու դեռ ոչ միայն իրեն, հապա ամբողջ Իսրայէլի յառաջդիմութեան արգելք եղաւ։ (Թուոց ԺԲ. զլուխ)։

Այսօր իսկ որքա՛ն տարբեր եզրակացութեանց պիտի գայինք մենք մեր եղբօր վրայ խօսելէ աւելի զանիկա հասկնալու ջանալով եւ պատենութիւն փնտռելով, որպէսզի Տէրը խօսի մեզի անոր մասին։ Այն ատեն եկեղեցիին մէջ շուտով կարգ մը անհասկցողութիւններ եւ կոիւնի պիտի դադրէին ու եղբայրական միութիւնը աւելի սեղմ ու Տէրոջը զործը աւելի աշխուժով յառաջ պիտի երթար։

Կայ նաեւ ուրիշ կէտ մը որ անէժք եղած է հաւատացեալներու եւ համայնքներու, այս է Տէրոջը ձայնը չճանչնալ։ Շատ մը հաւատացեալներ հարգ չեն տար որպէսզի Տէրը խօսի, լուռ չեն կենար որ Անոր ձայնը լսեն, իրենց անձնական խօսքերը կը սեպեն որպէս Աստուծոյ խօսքը, իրենց անձնական գաղափարը կը ջանան ընդունել տալ որպէս Աստուծոյ կամքը, կամ կը պաշտպանեն Տէրոջը խօսքը բոլորովին անյարմար մէթոտով մը ու կը հաւատան թէ այդ կերպով Աստուծոյ խորհուրդները կը փոխանորդեն, մինչդեռ իրենց խօսքերը մարմնի ու արեան, զգացումներու գործունէութեանց արդիւնքն է։

Աշխարհի այս մէթոտը հաւատացեալին փայլը կը կորսնցնէ, անոր զօրութիւնը կը շլատէ, հոգեւոր տենտութիւնը կը նուաղեցնէ ու եկեղեցին իր դիւրքէն կը խախտէ։ Այն անձը կամ եկեղեցին որ իր առջի սէքը կը կորսնցնէ, անմիջապէս կը ջանայ անոր տեղը բռնող կեղծ բանի մը յարելու, ասոնք են արքայի, հանդերձ, տուն եւ այլն։ Մարգարէն ահա այդ պատճառաւ կ'ազդարարէ Գէեզիին, «Ու հիմա արծաթ առնենելու եւ հանդերձներ, ձիթենիներ եւ ալգիներ ու ոչ-խաբներ եւ արջառներ ու ծառաներ եւ աղախիներ առնելու ատե՞նն է»։

Հիմա . . . :

Թերեւս անցեալ ժամանակ մը, բայց ոչ հիմա։ Հիմա ատե՞նն է։ Ո՛չ, վասնզի մօտ է Այն։ Ահա ես դրան առջեւ կայնամ կը զարնեմ։ Ո՛վ պահապան, դիշերուան համար ի՞նչ լուր կայ։ Առաւօտը կուգայ ու նաեւ գիշերը։ Վասնզի ժամանակը մօտ է. «Ան որ անիրաւութիւն կ'ընէ, ալ անիրաւութիւն թող ընէ, եւ ան որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ, եւ ան որ արդար է՝ ալ արդար ըլլայ, ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ ըլլայ»։ Տէրոջը զաւակը ինքզինքը կը մաքրէ։

Գէեզի երբ մարգարէին քովէն դուրս ելաւ, բորոտեալ գտնուեցաւ։ Ի՞նչ ահարկու դատաստան։ Իր ազա-

հուլիսը զինքն հոն տարաւ: Ունէր բաղձացած դրամը, այսու ամենայնիւ նաեւ բորոտութիւնը, որով ստիպուած էր հեռանալ ընկերութենէ ու սիրելիներէ: Իր փաքութիւնը կորսնցուցած էր: Գէեզի անմաքուր էր եւ Աստուծոյ ժողովուրդին հետ յարաբերելու ապիկար:

Ա՛խ, քանի՜ քանի հաւատացեալներու համար այս իրականութիւն է. հաւատացեալներ, որոնք իրենց մաքուր զէմքը կորսնցուցած են, որոնց աչքերը աղարտած են, որոնց սրտերը մթապնած են: Աստուծոյ ճամբուն մէջ Գէեզիի այս զէմքը սթափելու համար ազդանշան մը ըլլալու է:

Հիմա ատենն է այսպիսի վիճակի մը, շտապէ՛, շտապէ՛, մի՛ դանդաղիր, չէ՞ որ գործ ունինք, չէ՞ որ աշխարհը մեր կենդանի վկայութեան կը սպասէ: Մեր լոյսը այնպէս լուսաւորելու էր որ մարդիկ տեսնէին մեր բարի գործերը ու փառաւորէին Հայրը որ երկինքն է:

Բայց դայս կ'ըսեմ եղբայրներ, որ ժամանակը կարճացած է, ալ անոնք որ կ'ին ունին, այնպէս ըլլան, որպէս թէ չունին, եւ անոնք որ կուլան, որպէս թէ չեն լար, ու անոնք որ կը խնդան, որպէս թէ չեն խնդար, եւ անոնք որ ծախու կ'անեն, որպէս թէ բան մը չունին: (Ա. Կորնթ. Է. 29-30):

Ժամանակը շատ արագ կ'անցնի:

«Երանի անոնց որ սրտով մաքուր են, վասնզի անոնք պիտի տեսնեն զԱստուծոյ: Միայն անոնք կրնան զԱստուծոյ տեսնել, որոնք անաղարտ ու ճշմարիտ Աստուծոյ պատկերը կը պահեն իրենց սրտին մէջ եւ որոնց կեանքը Աստուծոյ հետ վստահելի յարաբերութեան մը մէջ է:

Ո՛վ որ մաքուր սիրտ ունի, մաքուր աչքեր ունի զԱստուծոյ տեսնելու, ո՛վ որ բեռնաւորուած սիրտ մը ունի, ունի աւրուած աչքեր, եւ աւրուած աչքեր անաղարտ չեն կրնար տեսնել:

Բայց մեր Տէրը ըսաւ, «Աչքերդ դեղ դիր, որպէսզի տեսնես» (Յայտ. Գ. 18): Անիկա ըսել կ'ուզէ, ուր որ սխալդ տեսար, հոն կանգ առ եւ ետ դարձիր:

Փառք ըլլալ Անոր որ ամէն վայրկեան պատրաստ է ընդունելու, յոգնած, արտամած հոգիները վերանորոգելու եւ դարձեալ զանոնք ուղիղ ճամբուն առաջնորդելու:

Բաց դուռ մը կայ, ինծի՛, ինծի՛ համար եւ քեզի համար, հոն պիտի գտնես քու նուիրական գանձդ, քու սրբութիւնդ, զոր կորուստը էիր: Առ դայն եւ աւելի սեղմէ սրտիդ եւ գուրգուրանքով պահէ դայն քու մէջդ:



ԻՆՉՊԷՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՆՄԵՂԱՆՉԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

(Շար. 2րդ Թիւէն)

Միտում կամ հաւանականութիւն.—

Ոեւէ մարդ կարող է մեղանչել: Ոեւէ մարդ կարող է սուտ մը զրուցել: Սակայն մենք գիտենք թէ ինչ ըսել կ'ուզենք երբ կ'ըսենք՝ «Ուղիղ մարդը չկրնար ստել»: Ոչ ալ ձօրձ Ուաշինգթոնը կը զրպարտենք ըսելով թէ անիկա սուտ զրուցեց երբ ըսաւ, «Ես չեմ կրնար սուտ խօսիլ»: Ամէն մեզք հակառակ է բարի մարդու մը բնութեան: Մենք խօսք մը ունինք, զոր օրինակ, որ կ'ըսէ «Փայտը չկրնար ընկղմիլ»: Ճշմարիտ է: Փայտը միշտ ջուրին երեսը ելլելու միտումն ունի, սակայն կարելի է զայն ընկղմեցնել: Տղու մը ձեռքը նոյնիսկ կարող է զայն ջուրին տակ պահել, թէեւ երբ թող կուտայ զայն, կրկին ջուրին երեսը կ'ելլէ: Այն անհատը որ յաղթական կեանք մը կը վարէ, այսինքն որուն մաքուր սիրտը Քրիստոսէ գրաւուած է, ու Քրիստոս կ'ապրի անոր մէջ, մեղանչելու միտում չունենար: Անոր բաղձանքն է միշտ Աստուծոյ հաճելի եղածը ընել, սակայն մեղանչելու ահարկու հաւանականութիւնը շարունակ գոյութիւն ունի: Ան կրնայ աշխարհի մէջ ընկղմիլ, կրնայ փորձութեան տեղի տալ եւ Սատանայէն ճշուել: Սակայն որքան ատեն որ մէկը բոլորովին նուիրած է ինքզինքը Քրիստոսի եւ Անոր հետ կատարեալ հաղորդակցութեան մէջ կը գտնուի, չը կրնար մեղանչել: Այսպիսի կեանք մը կարելի է ապրիլ միմիայն վայրկեանէ վայրկեան հաւատքով յաղթելով: Ոեւէ վայրկեան կարելի է որ մարդ իր նուիրման մէջ թերանայ կամ իր հաղորդակցութիւնը կտրէ:

Կառախումբի կառք մը չկրնար կանգ առնել, որչափ ատեն որ ան շարժման մէջ գտնուող վայրաշարժի մը կցուած է: Սակայն որեւէ վայրկեան կրնայ շղթան փրթիլ եւ այսպէս կառքը անշարժութեան կը մատնուի: Թոյլ տուէ՛ք որ կրկնեմ սակայն թէ ոչ մէկ անհատ ստիպուած է գիտակցաբար եւ կամաւոր կերպով մեղանչել: «Իմ Իրեն աւանդածս կրնայ պահել»: Ուրիշ թարգմանութիւն մը կ'ըսէ՝ «Իր ինծի աւանդած բանը կրնայ Անիկա պահել»: (Բ. Տիմ. Ա. 12) Փա՛ռք Աստուծոյ որ այս երկու յայտարարութիւններն ալ ճշմարիտ են: Ան կարող է ձեզ անբիծ պահել (Յուդա 24):

Նաեւ Յիսուս Իրեն հետեւողներուն համար կ'ըսէ «Մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք» . . . Եւ մէկը չկրնար իմ Հօր ձեռքէն յափշտակել» (Յովհ. Ժ. 28, 29) Յայտնի է որ մեր Փրկիչը ամէն նախապատրաստութիւն տեսած է որ մենք իր ձեռքէն չյափշտակուինք: Մեղքին յաղթութիւնը սակայն, որ Քրիստոսի հաւատալուն արդիւնքն է միմիայն՝ վայրկեանէ վայրկեան ձեռք բերուած յաղթութիւն մըն է եւ մենք շարունակ Յիսուսի նայելու ենք, մեր հաւատքին առաջնորդին ու կատարողին: (Եբր. ԺԲ. 2):

Այսու հանգրձ, գոհութիւն Աստուծոյ որ յաղթութիւն ունինք ոչ թէ մեր «Անոր նայել»ովը ալ «Անոր մեղի նայել»ովը: Պետրոս առաքեալ կարող էր Տէրը անարգութիւն տեսնել ու Անոր նայելով, զԱյն անիծել, սակայն երբ մեր Փրկիչը «Դարձաւ ու Պետրոսի նայեցաւ», Պետրոս ալիւս չէր կրնար իր Տէրն ուրանալ: Ո՛չ թէ մեր հաւատքը՝ ալ Անոր հաւատարմութիւնն է մեր պաշտպանութիւնը:

Մեր մէջ բնակող Քրիստոսը առաւելապէս կարող է յաղթել ամէն յանկարծական փորձութեան: Որքան ժամանակ որ Անոր կատարելապէս վստահինք եւ Անոր ամենափոքր հրամանին հնազանդ գտնուինք, յաղթական կեանքը կը շարունակենք: Մարդ ինչո՞ւ կամաւոր կերպով մեղանչելու է եւ ինչո՞ւ զորմանաք երբ կատարելապէս սրբացած քրիստոնեայ մը ըսէ թէ ինք երբեք զիտուծեամբ չմեղանչէր:

Անկման պատճառը.—

Նոյնիսկ խորունկ նուիրուած քրիստոնեաներու մեղանչելուն պատճառը այն է որ անոնք կատարելապէս Աստուծոյ կամքին յանձնուած չեն: Ապահովաբար կրնանք ըսել թէ քրիստոնեաներու մեծ մասը շատ թեթեւ կը նայի հպարտութեան, բարկութեան, դիւրագրգռութեան, անհամբերութեան, նախանձի, անձնասիրութեան, դառնութեան եւ ասոնց նման մեղքերու: Ուրեմն յաղթական կեանքը վարող քրիստոնեայի մը համար շատ դուրին է այս մեղքերէն մէկին կամ միւսին մէջ իյնալ, չէ՞ որ իրեն ընկեր քրիստոնեաներէն շատերը առանց շիկնելու կը գործեն այս մեղքերը, ու ոչ մէկը կը յանդիմանէ զանոնք: Կատարելապէս սրբուած մէկը միայն կարող է այսպիսի միւս յանդիմանել, հակառակ պարագային անոր պատասխան պիտի տրուի՝ «Բժիշկ, դուն քեզ բժշկէ», կամ «Գերտին եւ Շիւղի» օրինակը մէջ բերուի: Այո՛, միայն հոգեւոր մէկը կրնայ այսպիսի քրիստոնեայի մը օգնել: Ինչպէս Պողոս առաքեալ ալ կ'ըսէ, «Եթէ մէկը յանկարծ ինչեւիցէ յանցանքով բռնուելու ըլլայ, դուք որ հոգեւոր էք, այնպիսին հեղուծեան հոգիով ուղղութեան բերէք»: (Գաղ. 2. 1):

Սակայն դիւրին է յաղթական կեանքը շարունակել բոլորովին սրբացած այրերու եւ կիներու մօտ: Երանի թէ այսպիսիներուն թիւը բազմապատկուէր . . . :

Ինչո՞ւ համար վիրաւորուած կզգանք, երբ մէկը կ'ըսէ թէ ինք հասած է կատարելութեան մը, ուր այլեւս չը մեղանչէր: Որովհետեւ սովորաբար ատանկ արտայայտուող անհատի մը հետ յարաբերութեան մէջ գտնուողներ կը տեսնեն թէ անիկա իր կեանքովը կը հերքէ իր խօսքը, թէպէտեւ երբեմն անգիտակցաբար: Ուշ կամ կանուխ կը տեսնուի թէ անիկա թերութեան մը մէջ կ'իյնայ: Բարեպաշտ քրիստոնեայ մը ճաշկերոյթի մը առթիւ կը պատճառաբանէր թէ ինք արդէն հասած էր կատարելութեան մը, ուր այլեւս չէր մեղանչէր: Անոր ընկերակից հիւր մը, չեմ գիտեր անկեղծութեամբ թէ զայն փորձի ենթարկելու նպատակով, հանգարտօրէն ըսաւ անոր՝ «Ներեցէ՛ք ինծի, որ Ձեզի ըսեմ թէ ինծի այնպէս կը թուի որ քիչ մը անյագութիւն ցոյց տուիք ճաշի առթիւ»: «Տակաւին ոչ ոք անյագութեան նկատմամբ որեւէ զրպարտութիւն ըրած է իմ մօտին եւ ոչ ալ ձեզի կը թուատրեմ որ այդպիսի զրպարտութիւն մը ընէք», բացազանչեց ան: Այս պատասխանով քրիստոնեայ բարեկամին ցոյց տուած զրգռութիւնը ներկաներու դէմքին վրայ ծիծաղ մը արթնցուց: Անոր խօսքը եւ գործը բացայայտօրէն անհամաձայն գտնուեցան:

Այս փոքրիկ պատմութիւնը կը փաստէ երկու կէտերը: Այլեւս չմեղանչելու կատարելութեան հասած մարդը երբեմն դիւրագրգռու ու բարկացող է ու երբ թերութեան մը մէջ իյնայ, քրիստոնեաներու մեծամասնութիւնը առհասարակ կը ծիծաղին անոր վրայ ու հաճոյք կզգան:

Մեղք թէ տկարութիւն.—

Ես հաճոյքն ունեցած եմ հանդիպելու այնպիսի հաւա-

տացեալներու, որոնք կ'ընդունին թէ իրենք կատարեալ անմեղանչականութեան հասած են: Ամբողջ շաբաթ մը սեղանակից գտնուեցայ այսպիսի անհատի մը: Ուղիւն ըսելով՝ մեղքի որեւէ արտաքին հետք չնշմարեցի անոր վրայ: Աստուծոյ այս սիրելի զաւակը սիրով յանդիմանեց զիս կատարեալ անմեղանչականութիւն չբարոզելու համար: Ասոր հետեւանքն եղաւ երկար խօսակցութիւն մը այս նիւթին շուրջ: Իմ քննադատոյ յայտարարեց թէ Յիսուս Քրիստոս կատարելապէս արմատախիլ ըրած էր իր մէջէն բարկութեան ընաւորութիւնը: Խոստովանեցաւ թէ երբեմն անհամբերութեան, դիւրագրգռութեան եւ ոիրոյ հակառակ զգացումներ կ'ունենայ թէեւ, բայց անոնք ոչ թէ մեղք՝ այլ տկարութիւն կը նկատէ այլեւս:

Եւ դիտած եմ թէ ամէն անգամ որ «անմեղանչական» կատարելութեան հասած մարդոց մեղքերը մատնանիշ կ'ըլլան, անոնք ինքզինքնին կը պաշտպանեն ըսելով թէ այդ փոքրիկ բաները զոր մէնք մեղք կը կոչենք, մեղք չեն այլ տկարութիւններ միայն: Եղբայրներ, ձեր տկարութիւնները Քրիստոսի տօնէք եւ թող Քրիստոսի զօրութիւնը ձեր վրայ հանգչի: (Բ. Կոր. ԺԲ. 9):

Աւա՛ղ որ Քրիստոսի գործը յաճախ մեծ վնասներ կը կրէ «անմեղանչական» կատարելութիւնը՝ դաւանող մարդոց միջոցով: Անոնք պարծանքով կը խօսին իրենց այս կատարելութեան մասին, սակայն միեւնոյն ժամանակ այնպիսի կենցաղավարութիւն մը ցոյց կուտան որ կը հերքէ իրենց դաւանանքը:

Այսպիսի քրիստոնեայ մը օր մը բարեկամներէս մէկուն քով եկաւ անոր հետ տեւաւորական գործի մը շուրջ խորհրդակցելու: Խնդիրը կը դառնար գրեթէ այնպիսի յայտնի անհատատարմութեան մը շուրջ՝ որու մօտին բարեկամս զարմանքով բացազանչեց՝ «Այս կարգի գործառնութիւն մը ի՞նչպէս կը յարմարեցէ՛ք ձեր «անմեղանչական» կատարելութեան»: «Օ, առեւտուրը առեւտուր է», պատասխանեց մտիւրդ անհամբերութեամբ: «Այս կարգի գործառնութեան մը մէջ ես որեւէ գործ չեմ ուզեր ունենալ», պատասխանեց բարեկամս...

Արդ, մեղի համար հաւանական է որեւէ վայրկեան մեղքի մէջ իյնալ: Յաղթական կեանքը վայրկեանէ վայրկեան ձեռք բերուելիք յաղթութիւն մըն է: Այս խօսքերը կարգացողներէ շատեր ուրախութեամբ պիտի խոստովանին թէ իրենք հինգ րոպէ, տասը րոպէ, ժամ մը կամ աւելի երկար ժամանակ յաջողած են գիտակցաբար չմեղանչել: Սակայն բոլորս ալ տրամաւորեամբ խոստովանելու ենք թէ ատեն ատեն, ակամայ մեղանչական խորհուրդի մը տեղի կուտանք եւ երբեմն նոյնիսկ գիտակցաբար կը մեղանչենք յանկարծական փորձութեան մը ենթարկուելով:

Մենք կ'ընդունինք թէ Քրիստոսի նուիրուած հաւատացեալ մը որքան ատեն որ կը վստահի Տէր Յիսուսի եւ կը թողու որ Ան պահէ զինք եւ իր փորձութիւններուն յաղթէ, կամուրապէս մեղանչելու չհարկաւորուի: Ուրեմն բոլորովին օրինաւոր, արդարացի եւ յարմար է մեղի ամէն առաւօտ աղօթել՝ «Դուն մեզի պարգեւէ այսօր երբեք չմեղանչել», Եւ Քրիստոս կարող է մեղ նոյնիսկ սահելէ պահել: (Յուդա 24): Սակայն Անիկա ճիշդ այնչափ ժամանակ մեղ այսպէս կը պահէ, որքան որ այս վստահութեամբ Իրեն մօտ կը գտնուինք:

(Շար.)

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐԷ ԱՒԵԼԻ

Մի՞թէ կնիկը իր կամենկեր մանուկը կրնա՞յ մոռնալ, անանկ որ իր որովայնին ծննդեանը վրայ չգծայ, թէ՛ ու անոնք մոռնան, բայց ես քեզ պիտի չմոռնամ: Ահա ես քեզ իմ ձեռագոյ մէջ նկարագրեցի, քու սրբիսաներդ միշտ իմ առջևս են: (Եսայ. Խթ. 15, 16).

Երուսաղէմ փլատակ եղած ու տաճարը ամայի դարձած է: Ուր որ ատենօք իրիկուան զոհին յոյսը կը ցոյար, հոն կը բարձրանան բոցերու կեր դարձած, խորհրդաւոր աւերակներ: Ուր որ արծաթեայ փողերու ջինջ ձայնը կը թրթռանայ օդը, ագուսներու զարհուրելի ողբերգը կը լսուի: Ի՛նչ ողբերգութիւն: Իսրայէլի համար ամէն ինչ կորսուած է: Ժողովուրդը ցիրուցան եղած, մարդոգմէ անարգուած ու Աստուծոյ թողուած: Աստուծոյ թագաւորութեան վերջ դրուած, հայրերուն յոյսը ի դերեւ ելած, ընտրեալ ժողովուրդը իր դիւցազնական աւանդութեամբ, թագաւորական վսեմ զգացումով եւ խիզախ հպարտութեամբ՝ հեծաւ նոսաց ծաղր ու ծանակ դարձած է: «Տէրը մեզ թողած, Տէրը մեզ մոռցած է» ողբերգական արձագանգը կը հնչէ ամէն կողմ:

Իրա՞ն աշպէս է: Ո՛չ, Սիօն կը սխալի: Անիկա Յշմարտութիւնը հակառակ կողմէն կը ներկայացնէ: Սիօն՝ յանցանքի խոր զգացումով խոստովանելու էր «Մենք Տէրը մոռցանք, մենք զԱյն թողուցինք»: Սիօն իր տառապանքը նկատելու էր իբրեւ իրեն արժանաւոր պատիժը: Սակայն մարդիկ միշտ սովոր են իրենց յանցանքը Աստուծոյ վերագրել:

Թէեւ մարգարէն ամէն ջանք ի գործ կը դնէ իրենց աղփակին անարդարացի ըլլալը հասկնելու, թէ՛ եւ կը ջանայ քաջալերել զանոնք ըսելով թէ՛՝ եթէ ապաշխարեն, անշուշտ օգնութիւն պիտի գտնեն, սակայն ի զո՛ւր: Սիօն կը կրկնէ իր անյոյս աղփակը: Արդեօք Աստուծոյ իր համբերութիւնը կորսնցնել՝ չը՞ փոխեր իր նպատակը: Ո՛չ, Անիկա իս խեղճուկ զաւակներուն վրայ սրտանց գծալով՝ հեղութեամբ կը մտնենայ անոնց եւ իրենց սխալը իրենց հասկնելու համար կը հարցնէ՝ «Մի՞թէ կնիկը իրեն կամենկեր մանուկը կրնա՞յ մոռնալ . . . ու թէ՛ եւ մոռնայ . . . «կարելի է Աստուծոյ սէրը ասկէ աւելի փափուկ ու տաքուկ բառով մը որսկել: Մինչ հայրը, զօրաւոր հայրը, գրգռուած փայտին կը դիմէ, մայրը անգամ մըն ալ իրեն կը քաշէ սիրասուն զաւակը, ջերմ համբոյր մը դրօշմելու անոր ձակալին: Մինչ հայրը, զօրաւոր հայրը երես կը դարձնէ իր անառակ տղայէն, մայրը անոր ձեռքերը իրեններուն մէջ սեղմած արտասունքով կը սրտէ զանոնք: Մայրական սէրը քաղցր մեղեդի մըն է, սաղմոս մը, այնքան սուրբ ու անուշ որքան հրեշտակներուն քնարերգութիւնը: Մայրական սէրն ունի հսկայ ոյժ մը որ յուսախաբուած ենէ չսկարտուիր, քաջութիւն մը որ ամենէն մեծ

վտանգին առթիւ հերոսութիւն մը կը դարձնէ զինք ու համբերութիւն մը որ ամէն դիմադրութեան կը հանդուրժէ: Սէրը ամենակարողութիւն է: Մայրական սէրը գրեթէ ամենակարող է, կեանքի չափ զօրաւոր եւ մաքիւն աւելի ուժեղ:

Ո՛վ քրիստոնեայ, որ ապագայէն կը վախճաւ եւ ծածկաբար կը տարակուսիս Աստուծոյ հաւատարմութեանը վրայ, թող որ մայրդ օգնէ քեզի այս տարակոյսին յաղթելու: Յիշէ թէ մանուկ մը եղած միջոցիդ ի՛նչպէս անիկա քեզ խնամեց ու հոգաց: Միաքիւր բնային խաղաղիկ սենեակը ուր օրօրոցդ կը գտնուէր եւ մայրդ իր անուշ երգերով քեզ կը քնացնէր: Միաքիւր բեր թէ ի՛նչ սիրով կը ներէր ան քու յանցանքներդ: Ինչպէս քու բոլոր ճամբաներդ, թերեւս գէշ ճամբաներդ մէջ իր աղօթքներով քեզի կը հետեւէր լռիկ եւ աննշմար, սակայն անդադար: Այս երեւակայութիւնը երանութեամբ չ՛լցնէր քեզ: Ահա ինքն Աստուծոյ կեցած է այդ սիրոյ ետեւ եւ մեղմիւ կը խօսի քու ականջիդ «Ես այսպէս կը սիրեմ»: «Կարելի է որ կնիկ մը իր կամենկեր զաւակը մոռնայ... եւ ես որ ամենէն բարի մօրմէն աւելի վսեմ ու անսահման սիրով մը կը սիրեմ քեզ . . . »

Եւ որպէսզի անհաւատութեան խորամանկութեան հետեւելով՝ բացառիկ մայրերու տխուր օրինակները յառաջ չբերես, Անիկա կ'աւանդուցնէ քեզ յարելով՝ «Ու թէ՛ եւ անիկա մոռնայ, բայց ես քեզ պիտի չմոռնամ, ես քեզի կ'ողորմիմ»: Քեզ կատարելապէս ապաւինուցնելու համար՝ Ան որ քեզ չմոռնալ խոստացած է, կը հաստատէ նաեւ թէ չկրնար ալ մոռնալ: Ան որ ամէն բան կրնայ, չկրնար քեզ, իր խեղճ ու կարօտ զաւակը մոռնալ: Քեզ իր ձեռքերուն մէջը նկարագրած է նման այն գերիներուն որ իրենց տէրերուն անունը իրենց ձեռքերուն մէջ դրօշմուած ունէին: Ահա այսպէս Տէրը քեզ իրեն կապած է: Անիկա չկրնար բււ անուշդ իր ձեռքերուն մէջէն ջնջել, կամ քեզ իրմէ հեռացնել: Ինք ուր որ է, ձեռքերն ալ հոն են, ուր որ են ձեռքերը, հոն եւ նաեւ դուն: Ո՛վ կրնայ քեզ Աստուծոյ սէրէն զատել: Ու եթէ երբեք կարելի ըլլար (ինչ որ բացարձակապէս անկարելի է), որ Աստուծոյ իր մէկ ձեռքը կորսնցնէր, դուն տակաւին Անկէ հեռացած չես ըլլար, քանզի քեզ իր երկու ձեռքերուն մէջ նկարագրած է:

Ասիկա բաւական է քեզ հանդարտեցնելու: Եթէ աշխարհ, մեղք, կեանք կամ մահ քեզ վախցնել ուզեն, քաջաբար դիմադրէ անոնց, քանզի դուն Աստուծոյ սեփականութիւնն ես եւ առարկայ Անոր խնամքին: Եթէ Աստուծոյ քու կողմդ է, ո՞վ կրնայ քեզի հակառակ ըլլալ:

Եթէ մեր Աստուծոյն սիրոյ Յշմարտապէս հաւատայինք, ո՛րչափ հանգիստ պիտի գգայինք, փոքրիկի մը նման որ ժպտուն դէմքով կը պառկի իր օրօրոցին մէջ: Երբ պզտիկը վախճայ, մայրը կը հսկէ: Երբ անիկա նեղուի, մայրը կ'ամօքէ անոր ցաւը: Եթէ փոքրիկը

աղբատ է, հարուստ կզգայ, քանզի իր մայրն ունի: Մայրը տղան ունի, տղան իր մայրը: Մենք զԱստուած ունինք, Աստուած զմեզ ունի:

Մայր մը իր մահամերձ զաւակին քով նստած կ'ուզէր զայն մխիթարել երկինքին նկարագրութիւնն ընելով: «Հոն բոլորովին լոյս պիտի ըլլայ» կ'ըսէր, բայց զաւակը կը հառաչէր «Ահ, մայրիկ, այդ լոյսը աչքերս պիտի ցաւցնէ»: «Անուշ նուագներ պիտի լսես արծաթեայ փողերու եւ ոսկեայ քնարներու վրայ նուագուած»: «Ահ, մայրիկ, ամենամեղմ ձայնը ցաւ կը պատճառէ ականջիս», պատասխանեց փոքրիկ տառապեալը: Մայրը լռեց: Արտասուելից աչքերով ծռելով անոր յոգնած գլուխը իր կուրծքին սեպմեց մեղմիւ, շատ գուրգուրանքով: «Սիրելի մայրիկ, այսպէ՛ս պիտի ըլլայ երկինքը», մնչեց փոքրիկը:

Աստուծոյ սիրոյ կատարելութիւնն է երկինքը: Երկինքը Հօր Աստուծոյ մայրական սէրն է: Եթէ այս սիրոյն մէջ մ'նանք, հոս իսկ կը վայելենք երկինքը մեր պայքարներուն, տառապանքներուն ու տաղանայնեւրուն առթիւ:

Թարգմ. Գերմաներէնէ

Ն. Մ.

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԻՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Բրոֆ. «Ֆ. Պէթէրս»

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

Գ. ԳՆՈՒՆ

ԼՈՅՍԸ

«Աստուած ըստ Լոյս ըլլայ, ու Լոյս եղաւ»:

Ահ, ի՛նչ մեծաքան: ու փառաւոր եւ ի՛նչ հրաշալի է լոյսը, հանդերձ Աստուծոյ (Սաղմ. ճԳ. 2) որ «Լուսոյ Հայր կը կոչուի եւ Որոն բնականապէս յաւիտենական «ամբարձնալի լոյսն» է: Ի՛նչ պիտի ըլլար աշխարհը առանց լոյսի: Ո՛րքան անձանօթ, անբերանելի եւ ուրախութենէ զուրկ եղած պիտի ըլլար ան: Ո՛րքան մթամած եւ անկարող պիտի ըլլար նաեւ մեր միտքը:

Բայց ի՛նչ է լոյսը: — Մենք զայն որոշ կերպով չենք հասնէ. նոր. եւ քանի որ աշխարհի մէջ ենք անոր էութեան խորքը մեզի այնքան անձանօթ պիտի մ'նայ որքան բնութեան միւս գաղանիքները, քանզի ան Աստուծոյ առաջին ու բարձրագոյն արարչագործութիւնն է: Բայց մարդկային միտքը անոր նկատմամբ գոնէ հետեւեալ ծանօթութիւններն ստացած է. — Լոյսը Աստուծոյ բոլորող կենսական ոյժ մըն է, որ ամբողջ տիեզերքը կը շրջապատէ եւ բոլոր մարմիններուն ամենամանր մասնիկները մշտապէս ու ուժգին շարժման մէջ կը պահէ: Որքան արագ է շարժումը, այնքան սրածառ է նաեւ լոյսը: Եթէ ոեւէ մարմին բոլորովին անշարժ ըլլար, պիտի ըլլար նաեւ բոլորովին խաւարած, ուստի կարելի է ճշմարտօրէն ըսել թէ լոյսը կեանք ու շարժում է, իսկ խաւարը մահ: Տիեզերքի մէջ ոեւէ տեղ կատարեալ խաւար չափեր. նոյնիսկ հազարաւոր ոտք խոր հողին տակ կը, ուր մեր ցորենուան լոյսէն շլացած աչքը միայն ամենամթնի

գիշերը տեսնել կը կարծէ, դեռ կ'աճին կարգ մը ստորին կարգի բոյսեր: Եւ ծովու ամենախորին վայրերուն մէջն ալ, ուր մեր աչքերը լուսոյ ամենատար անշուշտ իսկ չեն տեսներ, դեռ կը շարժին ու կ'որսան կենդանի էակներ՝ լուսաւորուած իրենց տկար լոյսով: Երբ մարդ կը կարծէ թէ աշխարհ խաւարի մէջ է, այդ ճշմարիտ է միայն մեր փոքր երկրին մէկ մասին համար, անդին անհուն միշտը լի է լուսոյ այլերևոյթ, որոնք աստղէ աստղ, արեւէ արեւ կը թռչին:

Լոյսը մարմիններուն ո՛չ թէ միայն գոյն, պայծառութիւն եւ ձեւ կուտայ, հապա ունի նաեւ շատ մը ուրիշ սքանչելի յատկութիւններ: Ուստի ջանանք մօտէն ծանօթանալ անոր, մեր երկնա որ Հօր այս ստեղծագործութեան:

Նուրբ ստեղծի մը՝ պարզ աչքերով հազիւ տեսանելի նեղ ծակէն լուսոյ ճառագայթ մը անցնէր եւ լաւ խոշորացոյցով մը դիտէ անով լուսաւորուած ջուրի կաթիլ մը: Ի՛նչ պիտի տեսնես անոր մէջ: — Ամբողջ աշխարհ մը. հոն կ'ապրին ու կը շարժին հսկայ կենդանիներ. անոնք հոս կը թիավարեն հազարաւոր թռչուններով եւ այդ ու ձախ կը կլլին իրենցմէ փոքր արարածներ: Յամբօրէն, կարծես երազի մէջ, եւ ու առաջ կ'երեւան ուրիշներ՝ ծածկուած բիւրեղեայ գեղեցիկ տնակներու մէջ: Իսկ երբորդ տեսակ մը անասնիկներ միշտ իրենց ձեւը կը փոխեն, շատ մը կ'երկարին ու կը կտրեն, իրենց բազուկները կը տարածեն ու կը կծկին եւ երբեք չեն հանգչիր: Ասոնք բոլորն ալ կ'ապրին Աստուծով եւ կը գործադրեն նպատակ մը որ մեզի անձանօթ է: Ահա՛ քչա ամբողջ պատկերը՝ իր բոլոր գործերովն ու ձեւերով՝ կենդանի ու նուրբ կերպով կը նկարէ քեզի լոյսի միակ մէկ ճառագայթը:

Այժմ առ մեծ հեռագիտակը եւ դիտէ լուսինը: Ի՛նչ մեծ տարբերութիւն: Քիչ առաջ լուսինը քեզի միայն փոքր սկաւառակ մը կը թուէր: Բայց հիմա՛... Ընդարձակ հարթագիտութիւնն ինչ վրայ ցցուած կը տ'անես հսկայ, հազարաւոր ոտք բարձրութեամբ լեռներ, որ նոյն վրայ դիզուած են սեպածեւ, ճեղքաւորուած վիթխարի ապագածներ: Գոնէ կը տեսնուի նաեւ թէ լուսինը երկրէն բոլորովին տարբեր աշխարհ մըն է: Հոն յաւիտենական լռութիւնը կը տիրէ, հոն չկայ ո՛չ օդ եւ ո՛չ ջուր: Ո՛չ հովը ծառերու տերեւները կը խորշափեցնէ, ո՛չ առուն կը կտրկաչէ, ո՛չ ալիքը կը ծվծվայ եւ ո՛չ ալ ամպերը կը թաւալն մշտման երկնականարին վրայ: Այս ամենը մեզի կը ցուցնէ դարձեալ լուսոյ ճառագայթը, որ մեզի կուգայ լուսնէն:

Լուսոյ ճառագայթներէն կ'արտադրուին նաեւ գոյները՝ իրենց հալարաւոր երանգաւորումներով: Գոյներուն իւրաքանչիւրը տ'աշուժեան տարբեր աստիճան եւ մարմիններու վրայ տարբեր ազդեցութիւն ունի: Միայն ներգործութեան տակ բոյսը աւելի արագ կ'աճի, ուրիշի մը տակ աւելի դանդաղ, իսկ երբորդ մը քիմիական ուժերու հետ միացած լուսանկար կ'արտադրէ: Մին կենդանիները հանդարտեցնող յատկութիւն ունի, իսկ միւսը գրգռող: Օրինակի համար կարմիր լոյսը կատաղութեան աստիճան կը գրգռէ կոկորդիլոսը:

Վերջերս գիտնականներ յաջողած են նոյնիսկ՝ լուսոյ ճառագայթներու միջոցաւ ճշդել զանոնք արտադրող մարմիններու կազմութիւնը: Բացատրենք այս. — Եթէ լուսոյ նուրբ ճառագայթի մը դէմ մասնաւոր կերպով լղկուած ապակի մը բռնենք, այն ատեն երկայն գունագեղ երէզ մը պիտի տեսնենք, որուն վրայ նկարուած են մութ ու պայծառ գոյնով հարիւրաւոր նուրբ գիծեր: Արդ՝ այդ գիծերը մեզի կը ցուցնեն թէ ի՛նչ նիւթերէ կազմուած է այն մարմինը, որմէ լոյսը կուգայ... Այսպէս եթէ

աստղագետը հեռաւոր աստղի մը ամենանոսրը հառաքայմը կարգաւ անցնէ հաստաւածաւորմեան մի քանի ապակիներու մէջէն, պիտի կարենայ գտնալ թէ այդ աստղին մէջ ջուր, երկամ, ոսկի, ալ եւայլն կը գտնուին: Ան պիտի կարենայ գտնալ նաեւ թէ այդ աստղը հաստատուն, հեղուկ կամ կազային վիճակ մ'ունի, թէ ան շրջապատուած է օդի խառնուրդով, թէ կը մօտենայ կամ կը հեռանայ մեր երկրէն եւ ի՞նչ արագութեամբ... Բայց լուսոյ մէջ դեռ որքա՞ն գաղտնիքներ կան: Մենք պիտի յաջողինք թերեւս անոնցմէ ոմանք ալ գտնել: Սակայն անոնց մեծ մասին խաղաղութեամբ վերապահուած պիտի մնայ յաւիտեանականութեան, ուր մեր զբաղումը պիտի ըլլայ՝ Աստուծոյ հրաշալիքները անելի սուր աչքերով դիտել քան թէ հիմայ:

Որչա՞փ սքանչելի է նաեւ լոյսի զօրութիւնը: Արեւին լոյսը մեր երկրին հասնելու համար միլիոնաւոր քիլոմետր համարայ կը կտրէ, այսու հանդերձ դեռ բաւական ուժ ունի ամբողջ բուսական աշխարհը կանանչացնելու ու ծաղկեցնելու եւ մարդոց ու կենդանիներուն կենսունակութիւն տալու: Գեռ կէտ մըն ալ.— Արեւի հազիւ 80 տարի առաջ Ֆրանսայի մէջ դատարանը ծակեր անուշով մարդու մը խօսիլը արգելեց, քանզի ան կը պնդէր թէ չպիտի հանգստանայ մինչեւ որ ջաջողի լուսոյ հառաքայմին մէջ գտնուող պատկերները ապակիին վրայ տեսանելի դարձնել: Այդ տեսակ գաղափար մը արտայայտողը այն ժամանակուան մէջ խելագար կը թուէր: Սակայն այսօր ամէն մէկ մանուկ տեղեակ է թէ բոլոր լուսաւորեալ առարկաներէն արտացոլած լուսանկարը՝ թղթի վրայ տեսանելի դարձնել կարելի է: Ասով կ'ապացուցուի որ անոնցմէ եւ մեր ամենէն անտեսանելի լուսապատկերներ միշտ կը թռչին օդին մէջ:

Ուրիշ պարագայ մըն ալ.— Լուսոյ հառաքայմը՝ հակառակ իր արագընթացութեան՝ տեղէ տեղ համբարդելու համար մասնաւոր ժամանակի մը կը կարօտի. ֆոթոյի հայելովը կրնանք մենք այդ ժամանակը, այսինքն լուսոյ արագութիւնը, չափել եւ հաստատել թէ ան 8 վայկեանէն արեւէն, իսկ 30 տարիէն Բեւեռային աստղէն մեզի կը հասնի: Արդ՝ քջիկ մը խորհիմք այս վերջին օրինակին վրայ: Այս աստղէն արտացոլած լոյսը՝ իր մէջ պարունակուող աստղի պատկերովը միասին՝ անկէ 30 տարի առաջ բաժնուած է. ուստի մեզի կը պատմէ աստղին ո՛չ թէ միմօռ, հապա 30 տարի առաջուան վիճակին վրայով: ... Իրականութիւնը խօսելով մենք ո՛չ թէ Բեւեռային աստղը կը տեսնենք, հապա միայն երեսուն տարի առաջ համարայ ելող անոր մէկ լուսանկարը: Եւ եթէ ան 10 տարի առաջ անեքեւոս, թացած ալ ըլլայ, պիտի կարենանք դեռ 20 տարի ալ անոր փողփողիլը տեսնել: Իսկ բազմաստեղը (Յոր. Թ. 9 եւ Ամովս. Ե. 8), մեր երկրէն այնքան հեռու կը գտնուի որ իր լոյսը մեզի 500 տարիէն կը հասնի: Ուստի եթէ այս վայրկեանիս բազմաստեղէն մէկը մեզ դիտելու ըլլար, այն ատեն անոր աչքերուն ո՛չ թէ մեր այժմու, հապա 1430 ըդ. տարուան պատմութիւնը պիտի պարզուէր, քանզի ինչպէս որ այն աստղին լուսապատկերը մեզի հասնելուն համար 500 տարուան կը կարօտի, մեր երկրին լուսապատկերն ալ հոն հասնելու համար նոյնքան ժամանակի կը կարօտի:

Այսպէս մեծնորաբար լեցուած է բոլոր մարմիններու եւ էակներու պատկերներովը. ան լուսոյ գիրք մըն է, որուն մէջ բոլոր իրերուն եւ պատահարներուն հզգքիտ լուսանկարները կը պարունակուին: Բնականաբար մենք այդ գիրքը չենք կրնար կարդալ, չենք ալ գիտեր թէ երկնային լուսուղէն մարմիններուն մէջ կը գտնուին էակներ, որոնք կարենան իրենց անմահ աչքերով կարդալ այդ գիրքը: Բայց կրնանք ընդունիլ թէ Աստու-

ծոյ հրեշտակները, որոնք իրենց Տէրոջ հրամանը կատարելու համար աշխարհէ աշխարհ կը թռչին, մեծնորաբար լուսոյ գրքին մէջ մեր տիեզերքի ամբողջ պատմութիւնը կրնան կարդալ: Ամէն պարագայի տակ՝ Աստուած անշուշտ կը կարդայ. Ան, որ աչքը ստեղծած է, անշուշտ կը տեսնէ: Այս խորհուրդը մեզի կ'օգնէ՝ կազմելու տկար գաղափար մը թէ Աստուծոյ համար անցեալն ու ներկան միեւնոյն բանն են:

Այս բոլորը եւ դեռ ուրիշ շատ սքանչելիքներ ստեղծած է նա արարեալի միայն մէկ կարճ խօսքով, «Լոյս ըլլայ»: Արդ արեւ մեծ եւ հզօր է Աստուած: Սակայն այս մեր բնական բոլոր միայն մէկ փոքր մասը ու տկար պատկերն է այն հշտարիտ Լոյսին, Որոն վեհափառութեամբ նկատմամբ կը վկայէ Աստուծոյ խօսքը իր ամէն մէկ էջին վրայ: Ան կ'ըսէ.— «Աստուած լոյս է եւ Անոր մէջը բնաւ խաւար չկայ»: Ան մեզ, իր գաղափարն ալ լոյսին կը կանչէ, վաճաղի լուսոյ մէջ գիտնալն ու կենք, իսկ խաւարի մէջ տգիտութիւն ու մահ կայ: Ան մեզի խոստացած է նաեւ ապագային բնակեցնել զմեզ այնպիսի լուսոյ մը մէջ, որ երբեք խաւար չկայ եւ ուր մեր յարուցեալ մարմինները մեր Հօրը տան մէջ արեւի պէս պիտի փայլին: Լուսոյ ի՞նչ մեծ հրաշալիքներ չպիտի ողորկն այն ատեն մեր բոլորտիլը եւ մեր մէջը: Այս լոյսը որքա՞ն մեծ մղում մը տալու է մեզի՝ արդէն հոս, այս խաւար աշխարհին մէջ, ապրելու իբր լուսոյ որդիներ:

Մէկ խօսք նաեւ օր բաւին վրայ: Երբ կ'ըսուի, «Աստուած լոյսին անուանը ցորեկ եւ խաւարին անուանը գիշեր դրաւ», Աստուած որոշ ու յստակ կերպով կը հաստատէ թէ Ինքը ցորեկ ու գիշեր ըսելով՝ մասնաւորաբար ստեղծագործութեան պատմութեան մէջ՝ ի՛նչ կը հասկնայ ու ի՛նչ կը հասկցնէ մեզի: Յորեկներն ու գիշերները հիմակուանին նման տասներկուական ժամերէ չէին բաղկանար, հապա լոյսի ու խաւարի յաջորդական ժամանակաշրջաններէ, որոնց երկայնութեան վրայով մեզի բուն մը ըսուած չէ: Մենք այս առթիւ միտք բերելու ենք նաեւ հետեւեալ բացատրութիւնները. «Տէրոջը առջեւ հազար տարին մէկ օրուան պէս է եւ մէկ օրը հազար տարուան». կամ «Տէրոջը օրը», որ ոչ թէ միայն մէկ երկրաւոր օր, հապա ամբողջ ժամանակաշրջան մը կը նշանակէ: Ուստի Աստուածաշունչի յստակ բացատրութեան համաձայն՝ ստեղծագործութեան օրերը նկատելու ենք միայն ժամանակաշրջաններ, որոնց տեսողութեան նկատմամբ Սուրբ գիրքը մեզի բնաւ բան մը չըսեն, եւ որոնք սակայն հազարաւոր տարիներ տեսած կրնան ըլլալ: Անոնք լոյսի եւ կենսի գարգացման մեծ ժամանակներն էին, որոնց յետոյ խաւարի եւ դադարի ժամանակներ յաջորդեցին:

(Շար.)

Թրգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՄԱՆԿԱՆՑ ՍՐԻՆԱԿ

ԱՅՈՒ ԸՍԵԼ ՍՈՐՎԻԼ

Թուժպուշիկ այտերով, սիրուն փոքրիկ աղջիկ մը կար, իր հայրիկին ու մայրիկին մէկ հատիկ զաւակն էր, ուստի անոնք զինքը շա՛տ շա՛տ կը սիրէին: Անոր գեղեցիկ զգեստներ կը հագցնէին եւ ինչ անուշ բան որ գտնէին, անոր կը կերցնէին: Սակայն այս պզտիկ Մարիամը — այսպէս էր իր անունը — հնազանդիլ չէր սորված, երբ իր սիրելի մայրիկը

իրեն կ'ըսէր. «Մարիամ, հայրիկիդ կօշիկները մաքրէ», անոր բերնէն անմիջապէս կը թռչէր փոքր, բայց զգուշիւ բառը, «Ո՛չ»: «Ես հիմայ պիտի խաղամ, գործ չեմ ուզեր ընել» կ'ըսէր ու դուրս կը փախչէր: Այսպէս մեծցաւ Մարիամ միշտ «ոչ» ըսելով: Օր մըն ալ մտքէն չէր անցնէր «այո՛», ըսել եւ իր ծնողքը ուրախացնել:

Ինքը հազիւ 15 տարեկան կար՝ կորսնցուց իր հայրն ու մայրը եւ ստիպուեցաւ ուրիշ ընտանիքի մը քով սպասուհի ըլլալ, իր ապրուստը ճարելու համար: Բայց հոս ալ սիրով չէր հնազանդէր եւ երբ իրեն կ'ըսուէր. — «Մարիամ սենեակները մաքրէ», նախ «ո՛չ, չեմ ըներ» կ'ըսէր եւ ետքը կ'երթար կը մաքրէր: Իր այս «ո՛չ» ըսելովը վերջապէս այնքան նեղացուց տնեցիները, որ իրեն ըսին, «Ալ գնա՛ մեր տունէն, մենք չենք ուզեր քեզ»: Մարիամ ասոր վրայ շատ տխրեցաւ եւ ըսաւ. — «Ես շատ կը սիրեմ հոս մնալ, ինչո՞ւ զիս դուրս կ'ընէք»: Բայց տան տիկինը պատասխանեց. — «Դուն հնազանդիլ չես գիտեր, մենք չենք կրնար քեզ մեր տանը մէջ պահել» Այդ ատեն Մարիամ հասկցաւ թէ տանտիկնոջ «ո՛չ» ըսելու չէ: Երկար ատեն անգործ մնալէ ետքը ուրիշ ընտանիք մը գտաւ, որ զինքն իբր սպասուհի ընդունեց: Հոս ալ երկար չկրցաւ մնալ, քանի մը շաբաթ ետքը հոս ալ իրեն ըսին որ հեռանայ իրենց տունէն: Մարիամ հարցուց, — «Ինչո՞ւ, չէ՞ որ ես միշտ կը հնազանդէի»: Տիրուհին պատասխանեց. — «Այո՛, կը հնազանդէիր, բայց նեղսրտելով, դուն «ո՛չ» չէիր ըսեր, բայց մտքէդ կ'անցնէիր, ես այս կը նկատէի, եւ ես չեմ ուզեր որ մեր տան մէջ տրտունջ ըլլայ: Մարիամ շատ տխրեցաւ ու ինքզինքը շատ դժբաղդ զգաց որ «ո՛չ» ըսելու վրայ նոյնիսկ խորհելու չէր:

Այսպէս այդ տունէն ալ վռնտուած, հոս ու հոն կը թափառէր՝ շատ նեղուած ու յուսահատ: Օր մը նա հանդիպեցաւ իր երբեմնի ծերուկ ուսուցչին, որ իրեն հարցուց. «Ի՞նչպէս ես, Մարիամ, դեռ առաջին գործիդ վրայ ես»: «Ո՛չ», պատասխանեց սա եւ ապա պատմեց իրեն պատահած բոլոր դժուարութիւնները: Ուսուցիչը ըսաւ անոր. — «Սիրելի զաւակս, դուն «ոչ» ըսելու հիւանդութենէն կը չարչարուիս եւ ասկէ բժշկուելու ես: Եթէ հիմայ դուն նոր տեղ մը գտնես, այն առէն միշտ «այո՛» ըսէ, հնազանդէ: Մարիամ խոստացաւ այդպէս ընել:

Բիշ ետքը նոր տեղ մը մտաւ, ուր իբր սպասուհի գործելու էր: Հոն իրեն ըսուեցաւ թէ առտուն ժամը 6 ին անկողնէն ելլելու էր, սակայն հետեւեալ օրը տանտիկինը արդէն հինգուկիսուն զինքը կան-

չեց ըսելով. — «Մարիամ, չե՞ս ուզեր արդէն հիմայ ելլել, այսօր շատ գործ ունինք»: Ան ուզեց «ոչ» պատասխանել, բայց նա այս չար բառը կլլեց, ըսաւ. — «Այո՛, տիկին, անմիջապէս կուգամ»: «Ո՛հ, դուք շատ ազնիւ էք» ըսաւ նոր տիրուհին եւ խնդրեց իրսէ շուտով աղբիւրէն ջուր բերել: Սակայն այս գործը խոհարարուհեոյն պարտականութիւնն էր, ուստի Մարիամ բաւական սրտնեղացաւ քիչ մնաց որ «ոչ» բառը իր լեզուին ծայրէն դուրս թոցնէր: Սակայն նա յետոյ աւելի լաւ բան մը խորհեցաւ, «այո» ըսաւ եւ շուտով մը հրամանը կատարեց: Տանտիկինը շատ գոհ ակնարկ մը նետեց Մարիամին, եւ սա աւելի ուրախ էր, որ իր «ո՛չ» ըսելու գէշ սովորութեանը յաղթած էր եւ կրնար «այո՛» ըսել, որքան ալ որ դժուար գործ պահանջուէր իրմէ: Այսպիսով շատ սիրալիր յարաբերութիւն մը հաստատուեցաւ իր ու իր տիրուհեոյն միջեւ: Սա մեծ սիրով կը գուրգուրար Մարիամին վրայ եւ Մարիամ ալ խոնարհութեամբ կը հնազանդէր անոր:

Կ'ուզէ՞ք, սիրելի մանուկներ, ուրախ եւ երջանիկ ապրիլ, հնազանդեցէք ձեր սիրելի հայրիկին ու մայրիկին եւ միտք բերէք որ Յիսուս մանուկն ալ հնազանդ էր իր մօրը: Եթէ դուք հնազանդիք, Աստուած պապան ձեզ շատ պիտի սիրէ եւ ձեզի ու ձեր ծնողաց մեծ ուրախութիւն պիտի տայ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ձեռնադրութեան առթիւ եղբայրներու եւ քոյրերու կողմէ զրկուած բոլոր մաղթանքներուն համար ներկայիս սրտագին շնորհակալութիւններս կը յայտնեմ:

ՅՈՎՀ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

ԿԱՐԵԻՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Մասնաւորապէս կը խնդրուի խմբագրութեանս նոր հասցէն ուղարկութեան առնել, որ կը գտնուի Թերթիս առաջին էջին վրայ. — H. N. Ghazarossian, 7, Rue Papère, Marseille (France).

— Ամիս մը յետոյ պտորաւտ պիտի ըլլայ արդէն իսկ նոխապէս ծանուցուած «ԱՅԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ», ֆրանսական աւետարանական եկեղեցիի կրած հաւածանքներն ու վիշտերը եւ Աւետարանի յաղթութիւնը, 16 գեղեցիկ պատկերներով եւ գեղեցիկ կազմով: Գինը Ֆրանսայի եւ Սուրբոյ Համար 6 Ֆր. իսկ արտասահման 50 սէնթ է: Ապսպրանքներ տպմէն ընդունելի են:

— Ընդունեցինք Ամենօրեայ առաջնորդ Ե. Ե. Ք. Զանից Ընկերակցութեան 1930 թ. Լոզուզը հոգ. խորհրդաւորութիւններով. Հասցէ — K. H. Guzelimian, B.P. 425, Caire, Egypte.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպագր. «ԲԱՆԲԵՐ»-ի, 7, Բիւ Բաբեր